

ԾՈՎԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011թ.

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի համայնքի անդամներ, հրավիրվածներ, Ձեզ է ներկայացվում Ծովագյուղ համայնքի ղեկավարի 2011թ. ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում հրավիրվել է համայնքի ավագանու 7 նիստ: Կայացվել է 19 որոշումներ, որտեղ քնարկվել է համայնքին վերաբերվող տարբեր հարցեր: Կայացված որոշման մասին իրազեկվել է համայնքի բնակչությանը:

Համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 278 որոշում և 22 կարգադրություն:

Տարվա ընթացքում հրավիրվել է համայնքի ժողովներ, որտեղ քնարկվել են համայնքին հուզող տարբեր հարցեր:

Համայնքի ղեկավարի և ավագանու անուններով ստացվել են բազմաթիվ դիմումներ, որոնք ժամանակին ստացել են իրենց պատասխանները:

Յուրաքանչյուր շաբաթվա երեքշաբթի և ուրբաթ օրերին համայնքի ղեկավարի և ավագանու կողմից կազմակերպվել է քաղաքացիների ընդունելության, ընդունելության կարգին համապատասխան:

Մշտապես աջակցություն է ցուցաբերվել գորակոչին, ուսումնավարժական հավաքներին:

Այժմ ըստ բնագավառների հրականագրված
աշխատանքների մասին

2011թ. համայնքի բյուջեն կազմել է 65627900 դրամ՝ որից

- Սեփական եկամուտները – 18007100 դրամ
փաստացի կատարվել է - 11044000 դրամ կամ 61.3 %
որից՝
 1. հողի հարկ - 6701100 դրամ
 2. գույքահարկ – 3703200 դրամ
 3. տեղական տուրք - 218500 դրամ
 4. հողի վարձակալություն - 421200 դրամ

2011թ. կատարվել են համայնքում հետևյալ
աշխատանքները

- Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ:
 1. ուսանողների անվճար տեղափոխում
Ծովագյուղ - Երևան, Երևան – Ծովագյուղ
Ծովագյուղ – Սևան, Սևան – Ծովագյուղ
Ծովագյուղ - Գավառ, Գավառ – Ծովագյուղ
 2. մանկապարտեզի երեխաների անվճար տեղափոխում,
որի արդյունքում կատարվել է 6200000 դրամի ներդրում:

- Կատարվել է համայնքի վարչական տարածքի պարզեցված սխեմայի աշխատանքները և այն գտնվում է վերջին փուլում:
Այս աշխատանքների համար ներդրվել է 6600000 դրամ:

- Կատարվել է համայնքի գերեզմանոցի և մանկապարտեզի զեռոդեզիական հանույթների աշխատանքները, նշված տարածքների ցանկապատման համար ներդրվել է 760000 դրամ:
- Համայնքի շրջակա միջավայրի՝
 1. փողոցների մաքրման, աղբահանության, առուների և ձորի մաքրման աշխատանքների վրա ներդրվել է 2900000 դրամ:
- Ջրամատակարարման համակարգի նորոգման և պահպանման համար ներդրվել է 3960000 դրամ:
- Ճանապարհների նորոգման համար ծախսվել է 2100000 դրամ: Կառուցվել է նոր ճանապարհ անասունների արոտավայր դուրս գալու համար:
- Փողոցային լուսավորության և գյուղապետարանի շենքի ջեռուցման վրա ծախսվել է 1100000 դրամ:
- Մանկապարտեզի նորոգման համար ներդրվել է՝
 1. ջեռուցման համակարգի նորոգման վրա -3000000 դրամ:
 2. ցանկապատի նորոգման համար - 1900000 դրամ:
- Սոցիալական պաշտպանության ոլորտում ներդրվել է՝
 1. հուղարկավորության նպաստ – 1300000 դրամ
 2. մայրության նպաստ - 2450000 դրամ:
 3. անապահով ընտանիքներին – 4800000 դրամ:

- Գյուղապրտարանի ապարատի ծախսերը կազմել է 22640000 դրամ:

Ընդամենը համայնքի բյուջետային ծախսերը 2011թ. կազմել է
59700000 դրամ

Ջեկուլցող՝

Ծովագյուղ համայնքի ղեկավար՝ /Գ. Թովմասյան/